



Project funded by
EUROPEAN UNION



Մամո հաղորդագրություն

«Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ Կոպերնիկոս համակարգի միջոցով» (ՊՈՆՏՈՍ)

Կոնտակտային անձ՝

Տարախիկ Վարդանյան, Պոնտոս ծրագրի հաղորդակցության ղեկավար
095 336039 | tvardanyan@aua.am, pontos@aua.am

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը համատեղ ս.թ. հունիսի 24-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում նախատեսված են ՊՈՆՏՈՍ ծրագրի շրջանակներում իրականացնել բաց աշխատաժողով՝ մարզում գործունեություն ծավալող մասնագետների, ՏԻՄ ներկայացուցիչների, որոշում կայացնողների, հասարակական կազմակերպությունների, Սևանի ավազանի շուրջ հետազոտություններ իրականացնող ծրագրերի ներկայացուցիչների և այլ շահառու կողմերի համար:

Աշխատաժողովի ընթացքում կքննարկվեն հետևյալ թեմաները՝

- Արբանյակային դիտարկման համակարգերը, աղբյուրերը, կիրառությունները, դերը շրջակա միջավայրի մոնիթորինգի համար
- Սևանա լճի և ջրհավաք ավազանի համար իրականացված հետազոտությունները՝ արբանյակային պատկերների կիրառմամբ
- ՊՈՆՏՈՍ պլատֆորմի և գործիքակազմի ներկայացում՝ դերը Սևանա լճի մոնիթորինգի համար
- ՊՈՆՏՈՍ ծրագրի արդյունքների և արբանյակային տվյալների դերը որոշում կայացնելու համար:

Հանդիպումը կխթանի ՊՈՆՏՈՍ հետազոտական և կառավարման թիմի և համայնքների ներկայացուցիչների միջև կապերի ստեղծմանը՝ նպաստելով հետագա գործարկման ժամանակ արդյունավետ համագործակցությանը:

ՊՈՆՏՈՍ ծրագրի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել ծրագրի կայքէջ հետևյալ հասցով՝ <http://pontos-eu.aua.am/>:

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը չորս այլ գործընկերներ կազմակերպությունների հետ համատեղ 2020թ. հունիսի 1-ից մեկնարկել է «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ Կոպերնիկոս համակարգի միջոցով» (ՊՈՆՏՈՍ) ծրագիրը: Երեսուներեք ամիս տևողությամբ ծրագիրն իրականացվում է ԵՀԳ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության 2014-2020 թթ. ծրագրի համաֆինանսավորմամբ:

Common borders. Common solutions.